

նեայ . բոլոր օրը աշխատանքով ու իր հայրենեաց օգտին համար խորհուրդները ընելու կ'անցընէր , և գիշերները կարգալու հետ ըլլալով՝ քանի կ'երթար իր ձարտասանութիւնը անյաղթելի ուժ մը կ'առնէր : | սելու արժանի բաներ են այն ատենախօսութիւններն որ լ'նկդղիոյ խորհրդարանին մէջ ու անկէ ալ դուրս ըրած էր , ու յւրօպայի օրագիրները մեծ խնամքով կը հրատարակէին :

Դ ատ թշնամիներ ալ ունեցաւ () քոնէլ , բայց ինքը զանոնք արհամարհելով՝ անոնց թշնամութենէն վնաս մը չկրեց . | ուլանտացիք իրեն շատ ստակ թոշակ կապեցին , բայց ինքը ան ստրկին մեծ մասը իր հայրենեաց պիտոյիցը կը գործածէր : || իշտ կ'ըսէր թէ ով որ դժուարութեց չկրնարյաղթել ինքը նոյն դժուարութիւնները անյաղթելի կ'ընէ , բայց անխոնջութեղիմացը բան չդիմանար : | յերութեատենն ալ երիտասարդութեան կրակը վրան էր , ինչպէս որ 1840^{ին} խօսած ձառերէն մէկուն մէջ կ'ըսէ . | հայ ես կը ծերանամ , բայց կամքս նոյն է , այսինքն ազատութիւն հայրենեաց . հոգիս չծերանար , և ձեռուըներս զօրաւոր են հայրենիքս պաշտպանելու , :

() քոնէլ իրեն կրօնական պարտքերուն շատ հաւատարիմ էր . սուրբ խորհուրդներուն ստէպ կը մերձենար բարեպաշտութեամբ , և բոլոր յուլանտայի ժողովրդեան բարի օրինակ էր : | չխանասիրութեան հոգի ամենեին չէ տեսնուած () քոնէլի վրայ , և այնչափ փառաց համելէն վերջն ալ առջինին պէս խոնարհամիտ , գթած ու սիրելի էր ամենուն . բարձրահասակ ու յաղթանդամ էր մարմնով , և կերպարանքը նշանական , հագուստը անպահոյչ , բայց ամէն շարժմունքն ալ ազնուական :

() քոնէլ ամէն մարդու կրնայ ձըմարիտ ազգասիրութեան օրինակ ըլլալ : Հարկ չէ որ ամէն մարդ () քոնէլին լեզուն ու գրիը ունենայ . բայց

ձշմարիտ ազգասիր ըսուիլ ուզողը պէտք է որ () քոնէլին աստուածպաշտութիւնը , խաղաղասիրութիւնը , անշահասիրութիւնն ու խոհեմութիւնը ունենայ , և ջանայ աշխատի անդադար իր հայրենեացը օգտին ու պայծառութեանը պատճառը ըլլալու : | ն ատեն տարակոյս չունենայ որ իր անունն ալ () քոնէլի անուանը պէս անմահ կը մնայ , և ազգին յաջորդներուն օրհնութիւնն ու գովեստները արժանապէս կը ժառանգէ :

Զ . Ը

Ճշմարիտ հայրենասէրը պէտք է սիրէ իր երկիրը , իր երկրին օրէնքները և ազատութիւնները . և հասարակաց օգուած անձնական շահէն վեր պիտի դնէ :



ԱՇԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

|| արդէային ինաց երէարութիւնը :

| նշՊԻՍ որ առողջ օդի ու աղեկ կլիմայի մէջ ապրիլը մարդուս առողջութեանն ու երկար ապրելուն պատճառ է , ասանկ ալ քաղաքականութիւնն ու կրթութիւնը մարդուս երկայնակեցութեանը մեծ պատճառներէն մէկն է . և աս բանս քանի կ'երթայ՝ | յւրօպայի մէջ աւելի յայտնի կը տեսնուի . վասն զի եթէ մէկը նոյն երկրի մը մէջ քաղաքականութիւնը չծաղկած ատենուան մեռնողներուն թիւը ծաղկած ատենը մեռնողներուն հետ բաղդատելու ըլլայ՝ մէկէն տարբերութիւնը կ'իմանայ : | յւ ահա ասանկ բաղդատութեամբ հոս դնենք յւրօպայի քանի մը գլխաւոր տէրութեանց մեռնողներուն թիւը , որով կը տեսնուի թէ որչափ տարուէ տարի մեռնողները պակսելու վրայ են .

Ծուեա	.	.	1754էն ինչուան	1763	34ին — 1	1821էն ինչուան	1831	45ին — 1
Տանիմարքա	:	.	1751	1756	32 — 1	1817	1819	45 — 1
Գերմանիա	.	.	1788		32 — 1	1825		45 — 1
Բրուսիա	.	.	1717		30 — 1	1821	1826	39 — 1
Աւստրիա	.	.	1822		40 — 1	1828	1830	43 — 1
Հոլանդա	.	.	1800		26 — 1	1824		40 — 1
Անգլիա	.	.	1690		30 — 1	1844		45 — 1
Գաղղիա	.	.	1772		25 — 1	1844		44 — 1
Հռովմայ տէրութիւն.	.	.	1767		21 — 1	1829		28 — 1
Լոմպարտիա	.	.	1769	1774	27 — 1	1828		31 — 1

Այս համեմատութեամբ մեռնողներուն թիւը պակսած է ,

Ծուետի մէջ 61 տարուան միջոցը իրեքին մէկը .
Տանիմարքա , 66 տարուան մէջ՝ հինկին երկուքը .
Գերմանիա , 37 տարուան մէջ՝ նոյնպէս Ֆին 2 .
Բրուսիա , 106 տարուան մէջ՝ իրեքին մէկը .
Աւստրիա , 7 տարուան մէջ՝ տասուիրեքին մէկը .
Հոլանդա , 24 տարուան մէջ՝ կիսով չափ .
Անգլիա , 150 տարուան մէջ՝ կիսով չափ .
Գաղղիա , 72 տարուան մէջ չորսին իրեքը .
Հռովմայ տէրութեամբ մէջ 62 տարուան միջոցը՝ Յին 1 .
Լոմպարտիա , 56 տարուան մէջ եօթնին մէկը :

Միայն Որուսաստանի ու Կորվեկիայի մէջ մեռնողներուն թիւը գրեթե նոյնպէս մնացած է , ու աճեր է Կափոլիի տէրութեան մէջ :

Կոյնպէս քաղաքականութե ծաղկելուն պատճառաւաւն է որ Կարոպայի գլխաւոր քաղաքներուն բնակչաց թիւը երթալով բազմանալու վրայ է .
և հիմակուան մեռնողներուն թիւը՝ բնակչաց թուոյն նայելով՝ առաջները մեռնողներուն հետ ասանկ կը համեմատի .

Փարիզ , 80 տարուան մէջ մեռած է Յին 1 .
Լոնդոն , 178 տարուան մէջ կէսէն աւելի .
Պերլին . 72 տարուան մէջ չորսին մէկը .
Ճենովա , 261 տարուան մէջ հինկին իրեքը .
Վենենա , 80 տարուան մէջ չորսին մէկը .
Հռովմ , 63 տարուան մէջ կիսով չափ .
Ամստերտամ , 64 տարուան մէջ վեցին մէկը .
Փեթրապուրի . 40 տարուան մէջ՝ իրեքին երկուքը .
Սթոքոլմ , 67 տարուան մէջ՝ իրեքին մէկը .
Լիվուն , 38 տարուան մէջ կէսը .
Մէնչըսթր , 64 տարուան մէջ հինկին իրեքը :

Մարդուս կեանքը ցաւերովլեցուն է , և խիստ քիչ մարդ կայ որ հանգիստ ու երջանիկ կեանք ունեցող սեպուի . Հիւանդութիւն , կիրք , դրժքաղդութիւն անպակաս են գրեթե բոլոր մարդկանց մէջ : Կարձ ալ է

մարդուս կեանքը , բայց ան կարձ կեանքը ինչպէս կ'անցընենք : Մէկ տարին 8760 ժամի է . ասոնցմէ 2920 քունով կ'անցընենք , որ է իրեք մասին մէկը . 730 ուտելու կ'անցընենք . 730 ալ անձնական գործողութեանց . ըսել է թէ տարւոյն կէսը աս բաներուս կ'անցընենք հարկաւ , մնացած կէսն ալ ո՛գիտէ թէ ինչպէս :

Կասփէր անունով երեելի աշխարհագետը հետաքրքրական հաշիւմը կ'ընէ թէ զանազան վիճակներն ու արուեստները ինչ տարբերութիւն կ'ընեն մարդուս կենաց երկարութեանը վրայ , ու աս միջին համեմատութիւնները կը գտնէ .

Եկեղեցականք կ'ապրին	65 տարի .	1 ամիս .
Վաճառականք	62	— 4 —
Պաշտօնատեալք	61	— 7 —
Երկրագործք	61	— 5 —
Զինուորականք	59	— 6 —
Փաստաբանք	58	— 9 —
Նկարիչք . Երաժիշտք	57	— 3 —
Դաստիարակեք	56	— 9 —
Բժիշկք	56	— 8 —
Ընդհանուր ամենայն մարդիկ	29	— 6 —

Այս ցուցակիս նայելով վիճակ կայ որ մարդուս կեանքը կը կին կ'ընէ : Բայց աս ալ գիտնալու է որ հսույթուածները այնպիսի մարդիկ կ'իմացուին որ երիտասարդութեան փոթորիկներէն ազատ մնացեր են , և ընդհանրապէս հանգիստ կեանք մը կ'անցընեն՝ հիւանդութեանց վտանգներէն ու զանազան փորձանքներէ հեռու :